85. ԹԱԳԱՎՈՐՆ, ԱՂՔԱՏՆ ՈՒ ՕՁ

Արևելոց թագավոր, կըսին, էրազնուվի կը տեսնա, օր էրկնքեն գել կը թափեր, զայլաքուշտ կէղնի, կը խըռտի գիմնա, դալալ կիտա կանչել, թե ոն օր զուր էրազ մեկնե՝ հարիր օսկի կիտա։

Աղքատ մարդ մե կը լսե, բերնեն ջուր կէրթա։ Կէրթա արտ կաշխատի, հըմա դամ ու սհաթ ուշքն հըտ օսկուն է։ Օձն ուր ծկուց զգլուխ կը հանե դուս, կըսե.

— Մա՛րդ, օր զթագավորի էրզի միտք քըզի ըսիմ՝ զհարիր օսկին օր առնիս՝ կը բերի՞ս հըտ ընձի կիսիս։

Աղքատ խոսք կիտա։

— Գնա՛,— կըսե օձ,— թագավորին ըսե, ուր վազիր-նազիր, ուր փաշա-փուշեք, մեծամեծներ էղած ին գել ու գազան զախշարք կուտին, զֆախիր-ֆուխարի ճնճուլ կտրած ին, թըղ զըդոնք ջարդե, կոտորե, ախշարք կըռհաթի։

Աղքատ ղէրազ կը մեկնե, զհարիր օսկին կառնե, լե օձու փայն չիտա։

Մուդաթ մե գընցնա, թագավոր էլման էրազ կը տեսնա՝ երկընքեն աղվես կը թափին։

Թագավոր զաղքատ կանչել կիտա, կըսե.

— Հըմլա-հըմլա էրազ մ'իմ տեսի, օր զմիտք չըսիս՝ գլուխդի կիտամ զարկել։

Աղքատ կը մնա մըջ էրկու կրակին, էրազ չը կըռնա մեկնե, գլուխ կէրթա, օձու մոտ լե սեերես է։ Ջար-նաչար կէրթա օձուն

ըռչա կէնե, յոտք ու ձեռք գընկնա, զմեկնութեն դիմնա, դիկա Թա-գավորին կըսե.

— Թ՚ագավոր ապրած, քու էրկրի մուֆթիքն ու խազիք, մա-մուռներ ու փաշեք՝ էղած ին աղվես, կը խաբին զժողովուրդ, զարուն ուրանց կը ծծին, զախշարք կաղքըտցուն, բնաջնջել տուր ըռոնք, ախշարք կաղեկնա...

Աղքատ էլման բոլամա օսկի կառնե, լե օձու փայն չըտանե տա։

Վրա իրեքին Թագավոր կը տեսնա մըջ էրղին, որ էրկնքեն գառ կը Թափի։ Զաղքատ կը կանչին, որ Թագավորի էրազ մեկնե։ Աղքատ մուդաԹ կը խնդրե, կէրԹա օձու մոտ, կըսե՝

— Ես էրեր իմ, դու մ՚էնի. իմ ջերես քու ջառջև սև է. էրկու հեղ զքըզի խաբեցի, էլ չըմ խաբի։ Թ՚ագավոր էլման էրազ է տեսի, զմիտքն ըսե, էրԹամ Թագավորին ըսիմ, Թե չէ՝ զիմ գլուխ կիտա զարկել, իմ ճժկներ կը մնան անտեր, անտիրական։

Կը սորվի, կէրԹա Թագավորին կըսե.

— Զգիլանք ջարդեցիր, զաղվըսներ բնաջինջ էրիր, քու ախ-շարք մկա խախընդեր է. գառան պես ջիրարու հետ կապրին մար-դիկ, էլ դարդ ու ցավ չունին...

Աղքատ բոլամա օսկի կառնե, կը տանե դնե օձու ջառջև, կըսե.

— Վերո՛ւ ինչ խըգար քու քեֆ գուզե։

Օձ կը ծիծղա, կըսե.

— Մա՛րդ, ջառջին հեղ որ զիմ փայ օսկիք չը բերիր՝ գիլու ղավրան էր, դու լե գել էր դառձի, գիլու պես զիմ փայ օսկիք կերար։ Վրա էրկուսին՝ աղվըսու դավրան էր, աղվըսու պես զիսի խաբեցիր։ Մկա գառան դավրան է, դու լե գառ իս դառձի, զիմ փայ բերիր, լե ես օսկին ի՛նչ կէնիմ, տար զէդ օսկիք՝ զքու իդարեն էրե...